

ժամանակ խրախուսում փոքր բիզնեսի աջակցությունն իրականացնող տարբեր կառույցների միջև համագործակցությունը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

- [1] "Activity profile" UK Department of Trade and Industry, 1994.
[2] "Small Enterprise policy in UK" L. Storey, 1993.
[3] "Study of the SME sector in UK" Bannock & Peacock, 1994.

ԵՐԵՄԱՍՏԱՆ ԵՐԵՄԱՍՏԱՆԻ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Թամարյան Գ.

ՀՀ ԳԱՄ Մ.Զորանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտ

Հոդվածում ներկայացված է երեսպատման սալերի արտադրության հումք՝ քարային շինապաշարները և, ընդհանրապես, բնական երեսպատման սալերի արտադրության հիմնախնդիրները:

Тамарян Г. Промышленность облицовочных стройматериалов в Республике Армения.
В статье представлено сырье производства облицовочных плит - каменные строительные ресурсы, рассматриваются задачи производства облицовочных плит.

Tamarian G. The Industry of facing-stones and materials in the Republic of Armenia. The article discusses some aspects of economic problems of the facing-stones and materials in RA that are important for building the national economic strategy.

Երեսպատման շինանյութերի արդյունաբերությունը Հայաստանի շինանյութերի արդյունաբերության կարևոր ենթաճյուղերից է:


Քարամշակումը հայկական լեռնաշխարհում դեռ բրոնզի դարում եղել է արհեստի առանձին ճյուղ: Հայաստանում բազմաթիվ իրերն ու գործիքները վկայում են, որ պեմզան, կրաքարը, տուֆն ու օբսիդիանը, և ոչ միայն դրանք, կիրառվել են հասարակական կյանքի ամենատարբեր բնագավառներում [1]: Քարը, շինանյութ լինելուց բացի, օգտագործվել է մահ գարդեր ու գործիքներ պատրաստելու համար և արտահանվել է [2]:

Քարի մշակման արվեստը հայկական լեռնաշխարհում կիրառվել է ու շարունակվում է զարգանալ ամսկից ժամանակներից մինչև մեր օրերը:

Քարային շինապաշարները (ի դեպ, առավել լայն տարածում ունեն հրաբխային ապարները, որոնք զբաղեցնում են հանրապետության տարածքի երկու երրորդից ավելին [3]), նրբերանգների, կառուցվածքային ու մեխանիկական հատկությունների բազմազանությունը մեծ հնարավորություն են տալիս զարգացնելու երեսպատման շինանյութերի արտադրությունը [4]: Մինչև 1970-ական թվականները քարանյութերից երեսպատման սալերի արտադրությունը քիչ էր: Դրանից հետո, կապված բարձրահարկ շենքերի զանգվածային կառուցման և երկաթբետոնե հավաքովի տնաշինության հետ, արագ ընդլայնվեց, հասկապես՝ տուֆից ու բազալտից երեսպատման սալերի արտադրությունը:

1965 թվականի տվյալներով, քարից ստացվող արտադրանքի ընդհանուր ծավալը կազմել է 22, 1970-ին՝ 207, 1975-ին՝ 700, 1980-ին՝ 956, 1985-ին՝ 1179, 1990-ին՝ 503 հազ. բ.մ: 1965-85 թվականներին ավելի քան 50 անգամ ավելացել է երեսպատման սալերի (տուֆ, բազալտ, մարմար, գրանիտ, տրավերտին) արտադրությունը, և հատկապես մեկ մլն բ.մ-ի սահմանագիծը: Այդ թվերը ցույց տանք գրաֆիկով (ՃԿ. 1):

1980-1985թթ. երեսպատման սալերի արտադրության ծավալը՝ ըստ տեսակների բնութագրում է հետևյալ աղյուսակը:



ՆԿ. 1.

Խ.Խ.	Արտադրանքի անվանումը	1980-85թթ. տոկոսային արտահայտությամբ
1	Երեսպատման սալեր, ընդամենը	100
2	Տուֆ	75
3	Բազալտ	12,5
4	Մարմար	5,7
5	Գրանիտ	0,9
6	Տրավերտին	5,9


1985թ. այս ենթաճյուղին բաժին էր ընկնում շինարդյունաբերության ձեռնարկությունների՝ 16, արդյունաբերական անձնակազմի՝ 24 և հիմնական ֆոնդերի՝ 12%-ը:

Հայաստանը քարային երեսպատման շինապաշարներով առաջնակարգ տեղ է զբաղում ոչ միայն մեծամասն, այլև ամբողջ աշխարհում. 1985-ին հանրապետությունում հաշվառվում էր 42 հանքավայր (269,6 մլն խ.մ ընդհանուր պաշարով), որից 16-ը՝ տուֆի, 15-ը՝ մարմարի, 2-ը՝ բազալտի, 2-ը՝ տրավերտինի և: Այն ժամանակ մշակվում էր 23 հանքավայր, որից 10-ը՝ տուֆի, 6-ը՝ մարմարի, 2-ը՝ բազալտի, 1-ը՝ տրավերտինի: Արդյունահանվել է 1,6 մլն խ.մ հանքաքանակ, որից 1,4 մլն խ.մ տուֆ, 58 հազ. խ.մ բազալտ, 102 հազ. խ.մ մարմար:

Հարկ է նշել, որ քարի մշակման հնագույն ձեռնարկություններից է Երևանի «Հայմարտար», որը գործում է 1930 թվականից: Ձեռնարկության հզորությունը (1980-85թթ. տվյալներով) տարեկան 40-50 հազ. բ.մ է [5]:

Ավելի հզոր ձեռնարկություն է Նոտոնուսի (շահագործվում է 1960-ից) քարամշակման գործարանը: Սա ԱՊՀ-ում քարամշակման ամենահզոր ձեռնարկություններից է (1980-ականներին տարեկան արտադրել է մինչև 100 հազ. ք.մ սալ) [6]: Նշված ձեռնարկությունները երեսպատման սալեր են թողարկում մարմարից, գրանիտից, բազալտից ու կրաքարից, իսկ բազալտից երեսպատման սալեր արտադրող մասնագիտացած ձեռնարկություններից առավել հայտնի են Վայքիմն ու Վադարշապատից:

Ինչպես որմնաքարի, այնպես էլ երեսպատման սալերի արտադրությամբ ոլորտի առաջնեկը «Արթիկտուֆն» է. 1985-ին թողարկվել է 420 հազ. ք.մ երեսպատման սալ: Մի կարևոր հանգամանք է. 1985-ին համրապետությունում արտադրվել է ԽՍՀՄ-ում թողարկված առաջին երեսպատման սալերի 100%-ը: Մինչև 80-ականների վերջը Հայաստանը թողարկում էր ԽՍՀՄ-ում բնական քարից ստացվող երեսպատման նյութերի 20%-ը: Առաքվող արտադրանքի 75-80%-ը տուֆն էր: Իսկ վերջին 10 տարիների (1991-2000թթ.) երեսպատման սալերի արտադրությունը ցույց տալով գրաֆիկով (նկ. 2):



1990թ. վերջին շինարդյունաբերությունում երեսպատման սալերի արտադրությունը նվազեց և հասավ 60-ականների մակարդակին: Այսպես. 1994թ. արտադրվել է 41,6 հազ. ք.մ երեսպատման սալ, որը կազմել է 1993-ին արտադրվածի 72,5%-ը: 1995թ. նկատվել է աճ, և մախտող տարվա համեմատ ավելացել է 25%-ով (52,0 հազ. ք.մ), 1996-ին արտադրությունը կրկին անկում է ապրել՝ կազմելով մախտող տարվա 98,1 %-ը (51,0 հազ. ք.մ): 1998թ. արտադրվել է 41,8, իսկ 1997-ին՝ 39,8 հազ. ք.մ, այսինքն՝ գրանցվել է արտադրության աճ (4,8 %):

1999թ. տվյալները նույնպես չեն գոհացնում. համակարգիկտները ամխներին արտադրվել է 38,5 հազ. ք.մ երեսպատման սալ, որը կազմել է մախտող տարվա նույն ժամանակաշրջանի ցուցանիշի 92,1 %-ը [7]:

1990-2000թթ. արդյունաբերական արտադրանքի գրաֆիկից պարզ է դառնում, որ առաջին երկու տարում տեղի է ունեցել արտադրության ուղղագիծ անկում, իսկ մինչև 2000 թ.՝ չնչին փոփոխություններով մնացել է գրեթե նույն մակարդակին:

Այսօր Հայաստանում երեսպատման քարերի պաշարները հաշվառված են 61 հանքավայրերում, դրանց A+B+C₁ կարգի ընդհանուր պաշարը 296,3 մլն խ.մ է, և C₂ կարգինը՝ 55,7 մլն խ.մ, այդ թվում տուֆի՝ 21, ավազաքարի՝ 1, բազալտի՝ 4, գաբրոյի՝ 5, գրանոդիորիտի՝ 3, մոնցոնիտի՝ 2, մարմարի և մարմարացած կրաքարի՝ 17, տրավերտինի ու բրեկչիայի՝ 4, կոնգլոմերատի՝ 2, կրաքարի՝ 1, գիպսաքարի՝ 1 հանքավայրեր:

Վերջին չորս-հինգ տարիներին նշված հանքավայրերից շահագործվել են միջին հաշվով 24-ը, այդ թվում՝ տուֆի՝ 12, բազալտի՝ 2, գաբրոդիորիտի՝ 1, գաբրոսիենիտի՝ 1, գրանոդիորիտի՝ 1, մոնցոնիտի՝ 1, մարմարի ու մարմարացած կրաքարի՝ 3, տրավերտինի՝ 2, կոնգլոմերատի՝ 1 հանքավայրեր, որ A+B+C₁ կարգի պաշարները 169,3 մլն խ.մ է, և C₂՝ 2,4 մլն խ.մ է:

Շահագործվող հանքավայրերից հատկապես աչքի են ընկնում (նաև զգալի կորուստներով) Երվանդակերտի տուֆի (80-84%), Մարտիրոսի ֆելզիտային տուֆի (80-88%), Արթիկտուֆի (մոտ 55%), Սառնաղբյուրի տուֆի (մինչև 60%), Արամոսի բազալտի (50%), Արտավազի տրավերտինի (70%), Ենոքավանի մարմարացած կրաքարի (մոտ 65%), Փամբակի մոնցոնիտի (65 % և ավելի) հանքավայրերը:

Ընդհանուր առմամբ՝ երկաթ-բետոնե հավաքովի կոնստրուկցիաների արտադրության և կիրառման արդի ժամանակներում, բարանյութի օգտագործումը՝ երեսպատման սալերի ձևով, առավել նպատակահարմար է և արդյունավետ: Դա հնարավորություն է տալիս խնայողաբար օգտագործել տուֆը, մարմարը, գրանիտը, բազալտն ու մյուս քարանյութերի պաշարները: Բայց ի՞նչ խնայողության մասին կարող է խոսք լինել՝ նշված կոնստրուկցիաների դեպքում:

1993-95թթ., ընդհանուր առմամբ, 24 հանքավայրերից արդյունահանվել է A+B+C₁ կարգի 513,9 հազ. խ.մ հումք, որից 270,5 հազ. խ.մ-ը (տոկոսային արտահայտությամբ՝ 52,5) կորուստն է մարվող պաշարից:

Երբ 60-ականներին խոսվում էր բնական շինանյութերի (քարանյութերի) պաշարները լայն չափով կիրառելու մասին, միաժամանակ նշվում էր, որ հանքից ստացվող պիտանի մասը կազմում է 40-50 %, իսկ շինարարության համար մշակելուց հետո՝ 25-35 %:

Պատկերն ամբողջացնելու համար նշենք, որ արդյունաբերական զարգացած երկրներն իրենց հետագա հաջողությունները կապում են համաշխարհային տնտեսության մեջ զգալի եկամուտ բերող և արտահանման ներուժ ունեցող ճյուղեր ներգրավելու հետ:

Չպետք է մոռանալ, որ շինարարությունը, որին և կոչված է ծառայելու շինանյութերի արդյունաբերությունը, մի շարք երկրների համախառն ներքին արդյունքի մոտ 10 %-ն է կազմում: Այդ ցուցանիշը Հայաստանի համար վերջին տարիներին (1998-99թթ.) կազմել է 13-14 %: Իսկ շինարդյունաբերության արտադրանքի տեսակարար կշիռը արդյունաբերական արտադրանքի ընդհանուր ծավալում 1996-99թթ. կազմել է, համապատասխանաբար, 2,4; 2,8; 3,1; 3,4 %: Հետևաբար այս և մյուս ոլորտների մասնօրինակ ճգնաժամը բացասաբար է անդրադառնում ողջ տնտեսության վրա:

Այդուհանդերձ տնտեսապես զարգացած երկրներում կատարված ուսումնասիրությունները հիմք են տալիս վկայելու, որ երեսպատման շինանյութերի արդյունաբերության ոլորտում հետևողական լինելու դեպքում՝ նախ հնարավոր է ավելացնել ոչ միայն բամբակի արտադրողականությունը, այլ նաև մի շարք միջոցառումների շնորհիվ իջեցնել երեսպատման շինանյութերի ինքնարժեքը:

Ճյուղի զարգացումը ներկայումս հնարավոր է ապահովել՝ օգտագործելով առկա արտադրական տեխնոլոգիաները: Այս գործընթացը ավելի արդյունավետ կդառնա, եթե արտերկրի առաջավոր ֆիրմաների հետ կազմակերպվեն համատեղ ձեռնարկություններ:

Համարալետության էկոնոմիկայի վերելքի ռազմավարական խնդիրների լուծումը պահանջում է մի շարք ծրագրերի առաջնահերթ մշակում և իրականացում: Դրանցից կարելի է նշել սեփական հումքային ռեսուրսների համալիր մշակման արտադրությունների ստեղծում, որը հնարավորություն կտա ստանալ և օգտագործել համարալետության բազմաաարք հանքահումքային պարունակության բոլոր արժեքավոր նյութերը, որոնք, ի դեպ, համաշխարհային շուկայում մեծ հասարակական գնահատում ունեն [8]:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

- [1] *Խնկիկյան Օ.Ս.*, Արևմտեղծերը բրոնզեդարյան Հայաստանում, Ե., 1977, էջ 83-90:
- [2] *Burton G.A.* Royal inscriptions of Sumer and Akkad, New Haven, 1929, p. 185.
- [3] *Бадальян Р.С. и др.* Кавказский обсерватор, Историко-филологический журнал, 1996, 1-2, с. 245-264;
- [4] *Բորիսյան Ա.Ա.*, Շուրթը եին առաջավորասիական առևտրամշակութային համակարգում, (ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ), անոնախոսության սեղմագիր, Ե., 2000, էջ 22:
- [5] *Ավագյան Հ.Ս.*, Համախոսների ռազմավար օգտագործումը, «Գործարար Հայաստան», հ. 4-6, 1995, էջ 21:
- [6] *Թամարյան Գ. Գ.*, Տուֆը և որմնաղբյուրները Հայաստանում, «Գիտություն և տեխնիկա», հ. 4-6, 2000, էջ 27:
- [7] *Մելքոնյան Ա.Ս.*, Քարը մեր հարստությունն է, Ե., «Լույս», 1985:
- [8] *Мелкумян С.А.* Индустрия камня Армянской ССР. - Е.: Айкастан, 1984.
- [9] *Թամարյան Գ. Գ.*, Երևանյան քաղաքի արտադրության մի շարք ինժեներներ, «Հայաստանի շինարարների տեղեկագիր», հ. 11-12, 1999, էջ 20:
- [10] *Բորիսյան Մ.Խ.*, Ամբողջատիրական էկոնոմիկայից շուկայականի անցման գործընթացը, «Գործարար Հայաստան», հ. 1-3, 1995, էջ 7:

ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ ՈՐՊԵՏ ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՁԻՆ ՈՒՂՈՒԹՅՈՒՆ

Պողոսյան Ս.

Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարան, ստպիրանտական ընթացք

Ներկայացվող նյութում քննարկվում են տնտեսական աճի ապահովմանը խոչընդոտող ինստիտուցիոնալ արգելքները և հնարավոր լուծումները: Ժամանակակից աշխարհում տնտեսական ինտեգրացիայի հետ մեկտեղ զարգացած և զարգացող երկրների միջև եկամուտների տարբերությունը ոչ միայն չի նվազում, այլև խորանում է: Սակայն այսօր կարևոր են ոչ միայն քանակական ցուցանիշները (ՀԱԱ, ՀՆԱ և այլն), այլև քաղաքականության որակական չափանիշները: Այս հիմնախնդիրը բացահայտելու ֆունկցիան ընդամենը է *Զարգացման էկոնոմիկայի* որպես տնտեսագիտության ինքնուրույն գիտության վրա:

Погосян А. Экономическое развитие как отдельное направление в экономической науке. В современном мире разница в уровнях доходов в развитых и развивающихся странах не только не сокращается, но и имеет тенденцию к увеличению. Сегодня важно оценивать не столько количественные параметры, такие, как ВВП и ВВП, а качественные показатели благосостояния. Экономика развития в качестве самостоятельной экономической дисциплины выполняет функцию разработки данной проблематики. 1

Poghosian A. Economic development as a separate field in economics. Presently, along with the economic integration all over the world, the difference between income levels in developed and less-developed countries tend to increase, as opposed to expected decline. Today, it is more important to consider qualitative parameters of well being rather than usual quantitative factors, such as GNP or GDP. *Economics of Development*, as an independent branch in economic disciplines, identifies the ways to solve the issue.

Ժամանակակից աշխարհը կարելի է բնութագրել որպես եկամուտների տարբեր մակարդակ ունեցող երկրների համախմբություն: Ընդ որում, տատանման չափը հսկայական է՝ սկսած մեկ շնչին ընկնող համախառն եկամտի 200 ԱՄՆ դոլարից՝ Աֆրիկայի և Ասիայի որոշ երկրներում, մինչև՝ 15,000 ԱՄՆ դոլար՝ զարգացած երկրներում:

Սա ինքնին կարելի է բացատրել այնպիսի օբյեկտիվ տարբերություններով, որոնք առկա են երկրների միջև, ինչպիսիք են՝ աշխարհագրական դիրքը, բնակչության թիվը, տնտեսական ռեսուրսների առկայությունը, քաղաքական կայունությունը և այլն: Սակայն, մյուս կողմից, վերջին երկու-երեք հարյուրամյակների ընթացքում տնտեսական կապերը երկրների միջև այնքան արագ են ակադիվանում, որ նրանք փոխադարձաբար հնարավորություններ ունենի օգտվելու միմյանց առաջատար տեխնոլոգիաներից, աշխատուժի տեղաշարժը գրեթե չէր սահմանափակվում, և տրամադրանքային կլիմաներ ենթադրել, որ եկամուտների մակարդակների տարբերությունը պետք է նվազեր: Սակայն տեղի է ունենում հակառակը՝ տնտեսական ինտեգրացիայի հետ մեկտեղ զարգացած և զարգացող երկրների միջև եկամուտների տարբերությունը ոչ միայն չի նվազում, այլ որոշ դեպքերում խորանում է:

Ահա այս հիմնախնդիրներն է ուսումնասիրում *զարգացման էկոնոմիկան* (*Economics of Development*), որն, այնուամենայնիվ, որոշ տնտեսագետների կողմից չի համարվում առանձին գիտություն և չի դասվում տնտեսագիտության այնպիսի ինքնուրույն գիտակարգերի շարքին, ինչպիսիք են օրինակ՝ մակրոէկոնոմիկան, աշխատանքի էկոնոմիկան, պետական ֆինանսները և այլն:

Իհարկե, այդ կարծիքը կարելի է որոշ չափով կիսել, հաշվի առնելով այն հանգամանքը, որ զարգացման էկոնոմիկայում օգտագործվում են նույն տերմիններն ու գաղափարները, ինչ տնտեսագիտության այլ բաժիններում, սակայն վերջին 40-50 տարիների պրակտիկական ձևավորեց տնտեսական զարգացումը ուսումնասիրելու ինքնուրույն մեթոդներ:

Դրանք տարբերվում են և՛ զարգացած երկրներում կիրառվող ուսումնասիրման նեոդասական մեթոդներից, և՛ նախկին սոցիալիստական երկրներում կիրառվող վարչափարամայական մեխանիզմներից: 1979 թ. Նորելյան մրցանակ է շնորհվել Ա. Լյուիսին (Փրինստոնի համալսարան) և Տ. Շուլցին (Չիկագոյի համալսարան)՝ տնտեսական զարգացման հիմնահարցերի համակարգման և լուծումների փաթեթներ առաջարկելու համար: Այս փաստը ինքնին խառնում է հօգուտ զարգացման էկոնոմիկայի՝ որպես ինքնուրույն գիտության կայացման: